Վերակացու Ալբերտո Մ. Կարվալյուի

100-օրյա պլան

Alberto M. Carvalho
Դպրոցների վերակացու

Kelly Gonez
Նախագահ, վարչության շրջան 6

Nick Melvoin
Փոխնախագահ, վարչության շրջան 4

Dr. George J. McKenna III
Խորհրդի անդամ, վարչության շրջան 1

Mónica García
Խորհրդի անդամ, վարչության շրջան 2

Scott M. Schmerelson
Խորհրդի անդամ,վարչության շրջան 3

Jackie Goldberg
Խորհրդի անդամ, վարչության շրջան 5

Tanya Ortiz Franklin
Խորհրդի անդամ, վարչության շրջան 7

Parishi Kanuga
Աշակերտական խորհրդի անդամ

Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի հարգելի՛ համայնք,

Ես պատիվ ունեմ ծառայելու որպես ձեր վերակացու և անհավատալիորեն ոգեշնչված եմ աշակերտների, աշխատակիցների, ընտանիքների, խորհրդի անդամների և համայնքի անդամների շնորհիվ, ովքեր ինձ ջերմությամբ և ըստ պատշաճի ընդունել են Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանում: Ես արդեն այցելել եմ տասնյակ դպրոցներ և ամեն այցի ընթացքում զգում եմ մեր դասասենյակներում եղած էներգիան և ուսման հանդեպ ոգեշնչվածությունը: Ես այստեղ եմ, որպեսզի մեր աշակերտների համար ստեղծեմ առաջադիմելու, զարգանալու և իրենց ողջ ակադեմիական ներուժն օգտագործելու հնարավորություններ:

Լոս Անջելեսի կրթության միացյալ խորհուրդն իր առաջ լուրջ նպատակներ է դրել՝ շեշտը դնելով գրագիտության, թվաբանության, ավարտական դրույքաչափերի, հետմիջնակարգ կրթության հաջողության, ինչպես նաև մեր աշակերտների և աշխատուժի սոցիալական և հուզական կարիքների վրա: Իմ աշխատանքն է, հիմնվելով այս նպատակների վրա ընդլայնել այս Շրջանի ազդեցությունը, ներդնելով ջանքեր և բարելավելով մեր գործիքակազմերը, որպեսզի ապագայի դեռևս չգիտակցված իրավիճակների համար օպտիմալ արձագանք ունենանք: Ես ակնկալում եմ որոշակի խոչընդոտներ, սակայն ես չգիտեմ որևիցէ դպրոցական շրջան կամ հաստատություն, որն արդյունավետորեն փոխակերպվել է լավից դեպի հոյակապը առանց որևէ աստիճանի լարվածության, ահռելի ջանքի և ներդրող շահագրգիռ կողմերի նշանակալից ներգրավվածության: Սա հատկապես ճիշտ է հիմա, քանի որ մենք գտնվում ենք վերականգնողական շրջանում, որն արդեն ընթացքի մեջ է և ղեկավարվում է մեր աշխատակիցների և ընտանիքների կողմից, ովքեր համավարակի պայմաններում ուսանելու հետ կապված դժվարությունները կրել են ահռելի քաջությամբ և հաստատակամությամբ:

Գործողությունների պլանը լրացնում է այն հզոր աշխատանքը, որն արդեն ընթացքի մեջ է Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանում: Բարձրորակ ակադեմիական հնարավորությունների ռազմավարական ընդլայնման համար ես կազմել եմ 100-օրվա ծրագիր՝ ուղղակի և անուղղակի ազդեցություն կրելով մեր շահագրգիռ կողմերից: 100-օրվա ծրագիրը կենտրոնացած է չորս հիմնական առաջադրանքների շուրջ՝ տեղեկանալ, գնահատել, հաղորդակցվել և գործել: Այս առաջադրանքները հիմք կհանդիսանան հետագա ռազմավարական ծրագրի համար՝ ներկայացնելով հաջողության հնչուն և կայուն պատկերը Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանում:

Ժամանակն է կենտրոնացնել ուշադրությունն այն ամենի վրա, ինչն ամենակարևորն է մեր աշակերտների , ինչպես նաև նրանց համար, ովքեր աջակցում են նրանց ամեն օր, ներշնչել գործողությունների տեսություն, որն անհնարինը դարձնում է անխուսափելի Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար: Իմ կարիերայի ընթացքում սովորած ամենապարզ դասերից մեկը հետևյալն է. գիտությանը համապատասխան ապրելը՝ հետևելով տվյալների ուղղությանը, չնայած հակահարվածներին, բերում է այնպիսի արդյունքի, որի շուրջ միշտ համայնքը համախմբվում է: Այսօր մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ դա հատկապես ճիշտ է:

Ես խոստանում եմ այն համայնքին, որին ծառայում եմ, մեր աշակերտներին և ընտանիքներին, այս խորհրդին, մանկավարժների այս թիմին, քաղաքացիական, բիզնես և բարեգործական համայնքին և մեր աշխատանքային գործընկերներին, որ կարող եք հույս դնել ինձ վրա, որ ես ձեզ կընդառաջեմ այնտեղ, որտեղ դուք ներկայումս կանգնած եք: Ես լսում եմ: Միասին մենք կտանենք մեր աշակերտներին այնտեղ, որտեղ նրանք պետք է լինեն՝ կենտրոնացնելով մեր ուշադրությունը համարձակորեն աճող արդարության վրա, լրացնելով հնարավորությունների բացերը և քաջալերելով մեր համայնքին առանձնանալ, քայլել առաջ և արտահայտվել՝ աջակցելով մեկը մյուսին:

Շատ շնորհակալ եմ այս Շրջանին ջերմ ընդունելության համար: Եկե՛ք անցնենք աշխատանքի:

Հարգանքներով՝

Ալբերտո Մ. Կարվալյու
Վերակացու

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐ

Այս բացման ծրագիրն արտացոլում է կրթության վերաբերյալ մեր հիմնական համոզմունքները: Այս համոզմունքները ամփոփված են ստորև:

Արդարություն

Մենք կարծում ենք, որ մենք պետք է առանց ներողամտության անդրադառնանք հնարավորությունների մշտական բացերին, որոնք անհամաչափորեն արտացոլված են սև և լատինաամերիկյան համայնքներում: Լոս Անջելեսի միացյալ շրջանը ցույց է տվել, որ կարող է առաջնորդվել արդարությամբ: Բազմաթիվ դպրոցներում մենք տեսնում ենք իրավահավասար պրակտիկա, բայց սա պետք է լինի բոլոր դպրոցներում: Մենք պետք է փակենք հնարավորությունների բացերը և ոչնչացնենք խտրականության և ռասիզմի սերնդային, համակարգային դրսեւորումները մեր համայնքներում:

Հզորացում

Մենք հավատում ենք պահանջարկի վրա հիմված գործողություններին և պահանջարկի վրա հիմված քայլերին, որոնք ներգրավում և ընդունում են բազմաթիվ ձայներ, որոնք շահագրգռված են Լոս Անջելեսի միացյալ շրջանի հաջողության մեջ: Մենք պետք է իմաստալից գործենք՝ ստանալու անհրաժեշտ աջակցություն երեխաների համար: Մենք պետք է լայն աջակցության բազա ստեղծենք Շրջանի համար:

Գերազանցություն

Մենք հավատում ենք, որ Լոս Անջելեսի միացյալ շրջանի կողմից սպասարկվող համայնքներն արժանի են ամենալավ և օրինակելի կրթությանը: Մենք պետք է Լոս Անջելեսի միացյալ շրջանը դարձնենք երկրի լավագույն քաղաքային շրջան:

ՉՈՐՍ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

100-օրյա ծրագրի հաջողությունը հիմված է չորս հիմնական առաջադրանք կատարելու մեր կարողության վրա:

ՏԵՂԵԿԱՆԱԼ

Առաջին 100 օրվա ընթացքում մենք հնարավորություններ կստեղծենք լսելու այն համայնքը, որին ծառայում է Լոս Անջելեսի միացյալ շրջանը: Լոս Անջելեսն ունի փոխգործակցության, կազմակերպման և համայնքի հզորացման հարուստ պատմություն: Այս Շրջանի աշխատակիցները գիտելիքի և փորձի հսկայական պաշար ունեն. նրանցից շատերն այստեղ են մեծացել և ծառայել իրենց ողջ կյանքում: Մեր աշակերտների և նրանց ընտանիքների կյանքի փորձը արժեքավոր ցուցանիշ է, թե ինչպես մենք կարող ենք բարելավել և պահպանել մեր ծառայությունների որակը: Այնուամենայնիվ, կան բազմաթիվ Լոս Անջելեսի բնակիչներ, ովքեր դեռ ուղղակիորեն չեն աշխատում մեզ հետ, որոնց մենք կտրամադրենք տեղեկատվություն: Այս բոլորը կարևոր ակտիվներ են, որոնք կազդեն ապագա ռազմավարական ծրագրի և շրջանի ապագայի վրա:

ԳՆԱՀԱՏԵԼ

Հետևելով Լոս Անջելեսի միացյալ շրջանի հաջողությանը վերաբերող ուսուցման և որակական տվյալների հավաքագրմանը, մենք կանցնենք երկրորդ առաջադրանքին՝ գնահատելուն: Լոս Անջելեսի միացյալ շրջանը ակտիվորեն կհավաքի, կվերլուծի և կտրամադրի տեղեկատվությունը աշակերտների ուսման կարգավիճակի, շրջանի ֆինանսների, հաստատությունների և անձնակազմի պայմանների վերաբերյալ՝ օգտագործելով մատչելի տեղեկատվություն, որը հստակ սահմանում է, թե որ մակարդակի վրա են գտնվում մեր աշակերտները ակադեմիական և սոցիալական էմոցիոնալ բարեկեցության առումով՝ ճշգրիտ պլանավորման համար:

ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ

Սա հնարավորություն է Լոս Անջելեսի միացյալ շրջանի համար տեսանելի լինելու և շարունակելու՝ համագործակցել համայնքի և շրջանի շահագրգիռ կողմերի հետ՝ հանդիպելով նրանց անձամբ և առցանց: Մենք զրույցներ կանցկացնենք համայնքի անդամների հետ՝ բացահայտելու աշխատանքի ոլորտները և հասկանալու մեր մարտահրավերներն ու հնարավորությունները: Առաջիկա ամիսներին մենք ժամանակ կհատկացնենք՝ լսելու բոլոր շահագրգիռ կողմերին և կհանդիպենք նրանց հետ՝ ինտերակտիվ և վստահելի հարաբերություններ կառուցելու համար: Նրանց հեռանկարները կնպաստեն նրան, թե ինչպես ենք մենք բացահայտելու ներկա և երկարաժամկետ մարտահրավերներն ու հնարավորությունները: Այս լսումները նաև կօգնեն հաստատել շարունակական հետադարձ կապեր համայնքների, աշխատակիցների և ընտանիքների հետ, որոնց մենք ծառայում ենք:

ԳՈՐԾԵԼ

Լսելու և գնահատելու ծրագրի բաղադրիչների վրա հիմված գործողությունների հատուկ ընթացքով Լոս Անջելեսի միացյալ շրջանը կսահմանի և կապահովի վաղ հաջողություններ, որոնք ցույց կտան շրջանի կարողությունը արձագանքելու աշակերտների, ընտանիքների և անձնակազմի ուսումնառության և գործառնական կարիքներին: Ծրագրերի իրականացման միջոցով, ինչպիսիք են Խորհրդի կողմից հաստատված ծնողական ակադեմիան, մշակութային անձնագիրը և արդյունքների օպտիմալացման ներքին գործընթաց, կլինեն ազնիվ և թափանցիկ ջանքեր՝ ընդլայնելու աշակերտների հնարավորություններն ու ձեռքբերումները:

ՏԵՂԵԿԱՆԱԼ

Շահագրգիռ կողմերի ներգրավում

Առաջիկա ամիսներին մենք տեղեկություն կհավաքենք տարբեր շահագրգիռ կողմերից՝ բացահայտելու Շրջանի գործառնությունները և արդյունքները բարելավելու հնարավորությունները: Այս տեղեկատվական հանդիպումները կգնահատեն շահագրգիռ կողմերի ընկալումները Լոս Անջելեսի միացյալ շրջանի մարտահրավերների և հնարավորությունների վերաբերյալ և կստեղծեն աշակերտների նվաճումների ընդհանուր տեսլականը ինտերակտիվ և վստահելի ներգրավվածության միջոցով: Նիստերը և ստացված ներդրումը հիմք կհանդիսանան Լոս Անջելեսի միացյալ շրջանի 2022-2026 թվականների ռազմավարական ծրագրի մշակմանը:

Այս նպատակին հասնելու համար մենք պատրաստ ենք հետևյալին.

1. Լսել և համագործակցել մեր համայնքի շահագրգիռ կողմերի լայն շրջանակի հետ:
2. Իմանալ շահագրգիռ կողմերի կարծիքը Լոս Անջելեսի միացյալ շրջանի մարտահրավերների և հնարավորությունների մասին:
3. Աշակերտների հաջողության ընդհանուր տեսլականի համար ձևավորել վստահություն և համագործակցային ոգի և աշակերտներին խոսքի իրավունք տալ այդ տեսլականի մշակման և իրականացման գործում:
4. Ստեղծել կամ վերականգնել խորը և կայուն կապեր ընտանիքների, աշխատակիցների և համայնքի շահագրգիռ կողմերի հետ, որոնց մենք ծառայում ենք:
5. Կիսվել այս թեմաներով, դիտարկումներով և քաղված դասերով Խորհրդի և հանրության հետ և օգտագործել բացահայտումները՝ տեղեկացնելու համար, թե ինչպես ենք մենք իրականացնելու Խորհրդի նպատակները և առաջիկա ռազմավարական ծրագիրը:

Լսելու հնարավորություններ

- Անցկացնել մատչելի հարցում Շրջանի և դպրոցի ընթացիկ գործունեության հնարավորությունների և մարտահրավերների վերաբերյալ:
- Անցկացնել լսելու և տեղեկանալու նիստերը յուրաքանչյուր խորհրդի և տեղական շրջանում:
- Անցկացնել ֆոկուս-խմբեր կարևոր շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ
  - Ծնողները և տարբեր դասարանների աշակերտները և խորհուրդի և տեղական շրջանները, ներառյալ Շրջանի պատմականորեն անապահով տարածքների ընտանիքները
  - Բոլոր տեսակի աշխատողները և աշխատանքային խմբերը
  - Անգլերեն և ստանդարտ անգլերեն սովորողների ընտանիքները և խնամակալները, վերջերս ժամանած երեխաները, խնամատար երեխաները, անօթևան երեխաները և բացառիկ կարիքներով աշակերտները
  - Այլ կրթական մատակարարները, քաղաքացիական գործընկերները, տեղական, նահանգային և դաշնային պաշտոնյաները, բիզնես և բարեգործական գործընկերները
- Վերլուծել համայնքի կարծիքը վերջին տարվա ընթացքում, ինչպիսիք են անցյալ և ընթացիկ կարծիքները Տեղական վերահսկողության հաշվետվողականության պլանի (LCAP), Տարրական և միջնակարգ դպրոցներին արտակարգ իրավիճակներում օգնության (ESSER) հիմնադրամի, 2021 և 2022 թվականների Դպրոցների մասին հարցումների, Վերակացուի որոնման վերաբերյալ ֆորումների և հարցումների և Title I ուսումնական սեմինարների մասին:
- Օգտագործել լավ ուսումնասիրված զեկույցները և վավերագրված լավագույն փորձը ընտանիքների կարծիքների և ներգրավվածության արդյունավետ ռազմավարությունների վերաբերյալ:
- Հանդիպել արտաքին կազմակերպությունների հետ քաղաքացիական, բիզնես, կրոնական, բարեգործական, շահույթ չհետապնդող, հանրային և համալսարանական հատվածներից:
- Պահպանել շարունակական երկխոսություն ավագ ղեկավարության, վերակացուի կաբինետի և կրթության խորհրդի հետ:

Համագործության գործող կառույցներ

Շահագրգիռ կողմերի հետ լսելու, տեղեկանալու, իրականացնելու և շահագործելու մեր կարողությունը առաջին 100 օրվա, հաջորդ գործողությունների պլանների մշակման և ընդհանուր Ռազմավարական ծրագրի ընթացքում մեր հաջողության անկյունաքարն է:

Մենք կամրապնդենք ներգրավվածության գոյություն ունեցող հարթակները, ինչպիսիք են Ծնողների, Աշակերտների, Տնօրենների և Ուսուցիչների խորհրդատվական հանձնաժողովները, ինչպես նաև համագործակցությունը աշխատանքային խմբերի և համայնքային գործընկերների հետ: Ռազմավարական պլանը վերջնական տեսքի բերելուց հետո մենք կստեղծենք բիզնես խորհրդատվական աշխատանքային խումբ և կանոնավոր հանդիպումներ կունենանք ավագ ղեկավարության, վերակացուի գրասենյակի և Խորհրդի հետ:

Աշակերտները, որոնց մենք ծառայում ենք, և ընտանիքներն ու անձնակազմը, որոնք աջակցում են նրանց, կարևոր են մեր հաջողության համար: Նրանց ձեռքբերումները, ձայները և կյանքի փորձառությունը մշտապես կօգտագործվեն մեր էվոլյուցիայի ընթացքում՝ որպես Շրջանի:

ԳՆԱՀԱՏԵԼ

ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշակերտների առաջադիմության ամփոփում

Ամփոփել աշակերտների առաջադիմության տվյալները Լոս Անջելեսի միացյալ շրջանում՝ որոշելու աշակերտների օբյեկտիվ արդյունքները: Այս տվյալները կբաժանվեն ըստ ռասայի/ազգության, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, լեզվի իմացության, բացառիկ կարիքների և այլ հիմնական բնութագրերի՝ ֆինանսավորումը, ռեսուրսների բաշխումը և հաջորդ քայլերը որոշելու համար:

Թիրախային տվյալները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվի հետևյալով.

- Գրագիտություն, թվաբանություն և այլ հիմնական առարկաների տվյալներ
- Սոցիալ-տնտեսական գործոններ, ներառյալ ընտանիքի եկամուտը
- Շարժունակության տվյալներ
- Հաճախելիություն
- Նախապատրաստական դասարանի պատրաստվածության տվյալներ
- Անգլերեն սովորողների վերադասակարգման ցուցանիշ
- ԲՈՒՀ ընդունվելու պատրաստվածություն
- Ավարտելու և ուսումը թողնելու ցուցանիշներ
- A-G համակարգով «C» կամ ավելի լավ մակարդակ
- Գնահատականներ
- Սոցիալ-էմոցիոնալ ուսուցման ցուցիչներ
- Քրեական միջադեպեր ըստ թաղամասերի
- Ընտանիքի կամ խնամակալի կրթական մակարդակ

Ենթակառուցվածքների գնահատում քոլեջ ընդունվելու և կարիերային պատրաստվածության համար

Անցկացնել Շրջանի ենթակառուցվածքների համապարփակ վերանայում՝ օգնելու աշակերտներին նախապատրաստվել ԲՈՒՀ ընդունվելուն:

- Գնահատել խորհրդատուների հարաբերակցությունը (օրինակ՝ ակադեմիական և քոլեջի)՝ տեղեկացնելու համար, թե ինչպես ենք մենք երաշխավորում, որ ավագ դպրոցի բոլոր աշակերտները գիտեն իրենց խորհրդատուին անունով, և որ խորհրդատուները կարող են օգնել աշակերտներին մշակել անհատական հետմիջնակարգ ուսումնական ծրագիր:
- Վերանայել դպրոցական օրացույցները և աշակերտների արդյունքների առկա տվյալների ամսաթվերը՝ տնօրենների և գործադիր անձնակազմի հետ շրջանի մակարդակով տվյալների կանոնավոր քննարկումներ անցկացնելու հնարավորության համար:
- Վերանայել և առաջարկներ անել՝ բարելավելու Անհատական ավարտական պլանը և Կարիերայի ուղու պահանջը ավագ դպրոցի աշակերտների համար:

Լայն ֆինանսական վերլուծություն

Իրականացնել ֆինանսավորման պայմանների, գործելակերպի և կարճաժամկետ և երկարաժամկետ խնդիրների կարգավիճակի բյուջետային լայնածավալ վերանայում: Որոշել շրջանի ֆինանսավորումը առավել արդարացի և արդյունավետ օգտագործելու ուղիները՝ աշակերտների ձեռքբերումներն ու բարեկեցությունը բարելավելու համար: Այս վերլուծությունը, առնվազն, կներառի.

- Գնահատել և նախանշել ֆինանսական ռեսուրսների և անձնակազմի արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկություններ՝ դպրոցներին աջակցելու համար:
- Պատրաստել մանրամասն հաշվետվություն, որը ցույց է տալիս բյուջետային և ծախսված գումարների տարբերությունը՝ ավելի լավ որոշումներ կայացնելու և ապահովելու դրանց արդյունավետ օգտագործումը աշակերտների կարիքները բավարարելու համար, որպեսզի.
  - հասկանանք, թե ինչպես են ներդրումները բարելավում աշակերտի ձեռքբերումները կամ հասնում են նախատեսված նպատակներին
  - կատարելագործենք բյուջեի բաշխման մեթոդները
  - ներկայացնենք վստահելի կանխատեսումներ և բազմամյա բյուջեներ տարբեր «եթե/ապա» սցենարների ներքո՝ կենտրոնանալով կայունության վրա:
- Հավասարեցնել Լոս Անջելեսի միացյալ շրջանի ծախսերը փոքր բիզնեսների և փոքրամասնություններին պատկանող բիզնեսների համար:
  - Սոցիալականացնել թաղամասի գոյություն ունեցող պրակտիկան փոքր բիզնեսի ձեռնարկությունների վերաբերյալ:
  - Ստեղծել կատարողականի ելակետային տվյալների վահանակ և տրամադրել Շրջանի գործունեության կիսամյակային հաշվետվություն:

Մեր դպրոցներում և շրջակայքում բնապահպանական պարտավորությունների ստուգում

Իրականացնել բնապահպանական հնարավոր վտանգների համապարփակ վերլուծություն մեր դպրոցական համայնքներում և շրջակայքում:

- Դպրոցներում ստեղծել օդի որակի ցուցիչ երկրի ամենամեծ ցանցը: «Ճանաչիր քո օդային ցանցը» բաղկացած կլինի 200 սենսորներից, որոնք ծածկելու են Լոս Անջելեսի միացյալ շրջանի յուրաքանչյուր համայնք և իրական ժամանակում օդի որակի տվյալներ կտրամադրեն աշխատակիցների, աշակերտների, ծնողների և ողջ համայնքի համար:
- Դպրոցների մոտ/դպրոցների շրջակայքում բնապահպանական վտանգները բացահայտելու համար խորը հետազոտություններ անցկացնել:
- Մշակել արագացված գործողությունների պլաններ ամենաառաջնահերթ արդյունքների համար:

Վերլուծել անվտանգ անցումներ դեպի դպրոց և դպրոցից վերադառնալու համար

Աշակերտները, ովքեր դպրոցում իրենց ֆիզիկապես և էմոցիոնալ անվտանգ են զգում, ավելի լավ են սովորում: Մենք կուսումնասիրենք և կվերլուծենք ոչ միայն մեր դպրոցներում աշակերտների բարեկեցությունը, այլև այն խնդիրները, որոնք վտանգի են ենթարկում նրանց դպրոց գնալու և դպրոցից վերադառնալու ճանապարհին:

- Ընդլայնել համատեղ պատասխանատվությամբ համագործակցությունը համայնքային կազմակերպությունների հետ՝ օգնելու ապահովելու աշակերտների անվտանգ երթուղիներ դեպի դպրոց և վերադառնալու համար:
- Պարբերաբար համագործակցել շահագրգիռ կողմերի և արտաքին գործակալությունների հետ՝ բացահայտելու համայնքի կարիքները, թիրախային ոլորտները և համապատասխանաբար արձագանքելու համար:

ԳՆԱՀԱՏԵԼ

Կապիտալ բարելավման պլան

Շրջանի շենքերի արդիականացումը և բարելավումը աշակերտներին, ընտանիքներին և աշխատակիցներին սպասարկելու անբաժանելի մասն է: Աշխատակազմը կգնահատի, թե ինչպես են ներդրումները, հարմարությունները և ակտիվները ներկայումս օգտագործվում և ինչպես կարող են դրանք հետագայում օպտիմալացվել և արդյունավետ կերպով պահպանվել:

- Չորսամյա «այստեղ և հիմա» պլանի մշակում, որը դիտարկում է ընդհանուր կապիտալ ներդրումները՝ ստեղծելու, վերանորոգելու կամ փոխարինելու բոլոր հարմարությունները՝ աջակցելու աշակերտների կարիքներին և Շրջանի նպատակներին:
- Օգտագործել պարտատոմսերով ֆինանսավորվող ծրագիրը ուսումնական հաստատությունների համար որպես մոդել և մշակել համահունչ և համապարփակ ծրագիր, որն ուղղված է բոլոր կապիտալ նախագծերին, ներառյալ ոչ դպրոցական օժանդակ հաստատությունները, ովքեր իրավասու չեն պարտատոմսեր ստանալու համար:
- Գնահատել պարտատոմսերի ընթացիկ ծրագիրը՝ համոզվելու համար, որ այն աջակցում է Շրջանի ապագա կարիքներին և նպատակներին՝ համագործակցելով բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի հետ:
- Իրականացնել Օբյեկտի վիճակի ամբողջական գնահատում՝ գնահատելու բոլոր այն օբյեկտները, որոնք ներառված չեն պարտատոմսերով ֆինանսավորվող ուսումնական ծրագրում՝ ընթացիկ պայմանները գնահատելու և պահանջվող կապիտալ բարելավումները կանխատեսելու համար:
- Մշակել/սահմանել ֆինանսավորման ռազմավարություն՝ պարտատոմսերով ֆինանսավորվող ծրագիրը շարունակելու համար և ավելացնել ֆինանսավորման ռազմավարությամբ ծրագիր՝ բավարարելու կապիտալ ծրագրի կարիքների բալանսը, որն անհրաժեշտ է շրջանի ապագա կարիքները և նպատակները բավարարելու համար:
- Մշակել Շրջանի գույքն օգտագործելու ռազմավարություն՝ Օբյեկտների կապիտալ բարելավման պլանը կազմելու և իրականացնելու համար:
- Ներկայացնել լրացուցիչ կանաչ տարածք տրամադրելու և կամպուսներում էներգիայի խնայողությունը շարունակաբար խրախուսելու պլանով՝ առաջնահերթություն տալով այն համայնքների դպրոցներին, որոնք լրացուցիչ բաց բնական տարածքի կարիք ունեն:
- Մշակել համայնքի/դպրոցի նպատակային կապիտալ ներդրումների վահանակ:
- Ուսումնասիրել և գնահատել առկա հողերի գույքագրումը՝ մատչելի աշխատուժին աջակցելու նպատակով:

ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ/ՍՏՈՒԳՈՒՄ

Լանդշաֆտի վերլուծություն

Մենք կներգրավենք փորձագետներին ամբողջ երկրում՝ գաղափարներ, ուղղորդում և փորձ տրամադրելու ակադեմիական համախմբվածության հասնելու համար՝ կենտրոնանալով մարդկային կապիտալի ռազմավարությունների, ուժեղ ուսուցողական ուղեցույցին, համապարփակ և տարբերակված մասնագիտական զարգացման, հաշվետվողականության կայուն համակարգի և համագործակցային մշակույթի վրա:

Այս ուղեցույցը կներառի գործադիր ղեկավարությանն աջակցելը տվյալների օգտագործման նկատմամբ համակարգային մոտեցում ցուցաբերելու համար՝ խթանելու համակարգերի փոփոխությունները, զարգացնելու խոստումնալից պրակտիկան և զարգացնելու ղեկավարության կարողությունները յուրաքանչյուր մակարդակի վրա:

Մենք կիրականացնենք համակարգի կատարողականի տվյալների համապարփակ վերլուծություն (ակադեմիական, սոցիալական զգացմունքային, հաճախելիություն, վարքագծային)՝ կապված Խորհրդի կողմից հաստատված չորս նպատակների և առաջընթացի մոնիտորինգի չափումների հետ՝ ըստ աշակերտական խմբի:

Վերոնշյալ ցուցանիշները կբաժանվեն ըստ հետևյալ կատեգորիաների/չափանիշների.

- Դպրոցական բնութագրեր. SENI վարկանիշ, դպրոցի տեսակ, ուսուցիչների շրջանառություն, դպրոցի ղեկավարի պաշտոնավարման ժամկետ և ուսուցիչների փորձ:
- Տարածաշրջան/աշխարհագրություն՝ տեղական շրջան, վարչության շրջան, դպրոցի համայնք և բնակելի թաղամաս:
- Ծրագրի տեսակը՝ մասնագիտացված կամ երկլեզու ծրագրեր, դպրոցի ինքնավարության մոդել և հարակից անկախ դպրոցներ:
- Աշակերտի բնութագրերը՝ էթնիկ պատկանելություն, սոցիալ-տնտեսական կարգավիճակ (օրինակ՝ անվճար կամ ցածր գներով ճաշի իրավունք), շնորհալի երեխաների նույնականացում, հաշմանդամություն ունեցող աշակերտներ, լեզվի դասակարգում, խնամատար երեխաներ, անօթևան երեխաներ, տան փոստային ինդեքս և դասարան:

ԳՆԱՀԱՏԵԼ

Նոր ձևավորված Ռազմավարական տվյալների և գնահատման մասնաճյուղը կապահովի, որ ծրագրերը համապատասխանեցվեն լավագույն փորձին, որն առավելագույնի հասցնում է աշակերտների առաջադիմությունը՝

- Աշխատելով ծրագրի անձնակազմի հետ՝ մանրամասնելու նրանց գործողությունների տեսությունները և ակնկալվող արդյունքները, մշտադիտարկելով առաջընթացը դեպի այդ արդյունքները և համապատասխան ճշգրտումներ կատարելով:
- Վերանայելով գնահատման ընթացիկ պլանը՝ ընդհանուր թեստավորումը նվազեցնելու նպատակով:
- Ուսումնասիրելով համապարփակ գնահատման մոդելները և պրակտիկան:
- Համագործակցելով արտաքին հետազոտողների հետ՝ ապահովելու համար, որ ծրագրերն ու պրակտիկան հիմնված են հետազոտությունների և ապացույցների վրա և գնահատելու Շրջանի ծրագրերն ու արդյունքները:

Հավասարության հարցի վերլուծություն

Մենք կշարունակենք ներգրավել համալսարանական և շահույթ չհետապնդող գործընկերներին՝ հետազոտություններ իրականացնելու և օգնելու ամրապնդել կրթական անհավասարությունները լուծելու պրակտիկան, ներառյալ դպրոցների արդար ֆինանսավորման մոդելների գնահատումը և վերականգնման նախաձեռնությունների արդյունավետ իրականացումը: Գործընկերությունները միաժամանակ կաջակցեն և կզարգացնեն Ռազմավարական տվյալների և գնահատման բաժնի արտադրողականությունը:

Հիմնական հետազոտական ոլորտները կներառեն մանրամասն տվյալներ կրթական հնարավորությունների հիմնական ցուցանիշների վերաբերյալ, ներառյալ.

- Ակադեմիական առաջադիմությունը. թեստերի միջին միավորները, միավորների փոփոխությունները ժամանակի ընթացքում և տարեցտարի ուսուցման ցուցանիշները:
- Ուսուցումը. առաջադեմ դասընթացները, մշակութային առումով համապատասխան և աջակցող ուսումնական ծրագրերը:
- Դպրոցական ենթակառուցվածքը. պայմանները և մատչելիությունը հարմարությունների և սարքավորումների, որոնք աջակցում են ինտենսիվ ուսուցմանը և արտադասարանական ծրագրերին:
- Աշխատանքային կոլեկտիվի կայունությունը:

Վերոնշյալ միջոցառումները կգնահատվեն հետևյալով.

- Աշակերտների ժողովրդագրություն. ռասա, էթնիկ պատկանելություն, սեռ և ընտանիքի եկամուտ:
- Վայրը. դպրոցներ և թաղամասեր:

Ընդունելության միտումները

ենք կօգտագործենք արտաքին գործընկերությունները՝ զարգացնելու մեր ընդհանուր ընդունելության օրինաչափությունների համապարփակ վերլուծությունը՝ հասկանալու, թե որքանով է շարունակվելու մեր երկարաժամկետ ընդունելության անկումը, դրա հիմնական պատճառները և արդյոք դա կարող է հանգեցնել անհավասար հնարավորությունների որոշ համայնքների և աշակերտական բնակչության համար: Այս վերլուծությունը կհանգեցնի համապարփակ, երկարաժամկետ մարքեթինգային ծրագրի՝ նպատակ ունենալով փոխել ընդունելության ընթացիկ միտումները ողջամիտ ժողովրդագրական պարամետրերի շրջանակներում:

Մենք կտրամադրենք ընդունելության միտումների համապարփակ վերլուծություն՝ ըստ հետևյալ կատեգորիաների/չափանիշների.

- Դպրոցական բնութագրեր. SENI վարկանիշ, դպրոցի տեսակ, ուսուցիչների շրջանառություն, դպրոցի ղեկավարի պաշտոնավարման ժամկետ և ուսուցիչների փորձ:
- Տարածաշրջան/աշխարհագրություն՝ տեղական շրջան, վարչության շրջան, դպրոցի համայնք և բնակելի թաղամաս:
- Ծրագրի տեսակը՝ մասնագիտացված կամ երկլեզու ծրագրեր, դպրոցի ինքնավարության մոդել և հարակից անկախ դպրոցներ:
- Աշակերտի բնութագրերը՝ էթնիկ պատկանելություն, սոցիալ-տնտեսական կարգավիճակ (օրինակ՝ անվճար կամ ցածր գներով ճաշի իրավունք), շնորհալի երեխաների նույնականացում, հաշմանդամություն ունեցող աշակերտներ, լեզվի դասակարգում, խնամատար երեխաներ, անօթևան երեխաներ, տան փոստային ինդեքս և դասարան:

ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ

Ներքին հաղորդակցություններ

Հստակ, թափանցիկ և կանոնավոր հաղորդակցությունը Վերակացուի և Կրթական խորհրդի միջև հիմնարար է արդյունավետ կառավարման, հաշվետվողականության և դպրոցական համայնքի հանդեպ արձագանքելու համար: Այդ նպատակով Վերակացուն կանոնավոր հանդիպումներ և ճեպազրույցներ կունենա խորհրդի յուրաքանչյուր անդամի հետ՝ լուծելու խորհրդի անդամների ցանկացած խնդրանք տարբեր բաժինների համար: Տեղեկատվության տրամադրման մեջ փոխկապակցվածություն պահպանելու համար Վերակացուն անձնակազմին կուղարկի խորհրդի անդամներից ստացված հարցումները: Աշխատանքային մեթոդները առնվազն կներառեն.

- Վերակացուի կողմից թարմացումների օպտիմալ հաճախականությունը և՛ Գլխավոր խորհրդի, և՛ Ամբողջական կոմիտեի նիստերում:
- Եռամսյակային տվյալների/առաջընթացի թարմացումներ և աշխատաժողովներ անձնակազմի հետ արդյունքները վերանայելու համար:
- Ուրբաթ օրերին ամփոփիչ թարմացումներ ծրագրի ընտրված կետերի և առաջիկա գործողությունների վերաբերյալ:
- Հաճախակի ոչ պաշտոնական ստուգումներ խորհրդի առանձին անդամների հետ:

Արտաքին հաղորդակցություններ

Մենք կբարելավենք հաղորդակցության ռազմավարությունները՝ ամրապնդելով մեր թվային սոցիալական մեդիայի ներկայությունը և հնարավորություններ ստեղծելով կապվելու համայնքի անդամների հետ: Ներգրավվածությունը մեծացնելու նպատակով մենք կկիսվենք ոգևորող նորություններով տարբեր լրատվամիջոցներով, որոնք կներկայացնեն աշակերտների, անձնակազմի և ընտանիքների տարբեր փորձառությունները:

- Բարձրացնել համայնքի ներգրավվածությունը, ինչպես նաև սոցիալական լրատվամիջոցների հասանելիությունը, ցուցադրումները, ցուցանիշները և վերլուծությունները:
- Մշակել նշանաբան և հեշթեգ ամբողջ Շրջանի համար՝ ռազմավարական պլանի հետ համատեղ և օգտագործել սոցիալական մեդիա արշավը՝ խթանելու ընդլայնված ուսուցման հնարավորությունները:
- Ստեղծել խոսակցական կոնտենտ սոցիալական հարթակների համար, օրինակ՝ «Հարցրեք վերակացուին» Twitter Chat-ում և Facebook Live-ում:
- Մշակել սոցիալական մեդիայի գործիքակազմ տնօրենների համար՝ խրախուսելու անձնակազմին և ընտանիքներին հետևել Շրջանին սոցիալական ցանցերում՝ որպես համայնքի իրազեկման ջանքերի մի մաս:
- Ստեղծել կոնտենտ բոլոր շահագրգիռ կողմերի հետ բովանդակալից հաղորդակցությունն ու ներգրավվածությունն ուժեղացնելու համար:
  - Համայնքի համար հասկանալի դպրոցների թափանցիկ հաշվետվություններ
  - Աշակերտների պատմություններ, կենսագրություններ և ձեռքբերումներ
  - Ծնողների ներգրավվածություն և ուսուցողական տեսանյութեր
  - Հիշեցումներ աշակերտների համար, որոնք համաժամացվում են Շրջանի օրացույցի հետ
  - Ընդհանուր և դպրոցական արարողություններ

ԳՈՐԾԵԼ

Վերակացուի առաջին 100 օրվա ընթացքում Շրջանը կկենտրոնանա անմիջական գործողությունների վրա՝ խթանելու ապագա աշխատանքի համար՝ միաժամանակ բացահայտելով կայուն հաջողության հիմական ռազմավարություններն ու ծրագրերը: Այս գործողությունները հիմված կլինեն համայնքի շարունակական ուսուցման և ընթացիկ պրակտիկայի և քաղաքականության գնահատման վրա: Շրջանը հստակ և թափանցիկ կերպով կհաղորդի այս գործողությունների և դրանց արդյունքների մասին:

100 օրվա ընթացքում Շրջանը կիրականացնի հետևյալ անհապաղ գործողությունները.

Անվտանգ վերադարձ գլխավոր գրասենյակ

Ապահովել աշխ ատակիցների անվտանգ վերադարձը Շրջանի գլխավոր գրասենյակ, ներառյալ ղեկավարության և վերահսկիչ անձնակազմի արագ վերադարձը և ամբողջ անձնակազմի վերադարձը մինչև 2022 թվականի ապրիլի 25-ը:

- Ապահովել ժամանակին ծանուցում ողջ անձնակազմին՝ գրասենյակային աշխատանքին կազմակերպված անցումի համար:
- Համոզվել, որ աշխատատեղերը համապատասխանում են առողջության և անվտանգության ընթացիկ ուղեցույցներին, որոշ բացառություններով աշխատանքի ճկունության համար:

Առավելագույնի հասցնել աշակերտների հնարավորությունները՝ աշխատանքային գործընկերների հետ համագործակցության միջոցով

Մշակել և իրականացնել կոլեկտիվ պայմանագրերի ռազմավարություն, որպեսզի բոլոր բանակցությունները լինեն արդար և հիմված լինեն՝

- Փոխհատուցման համաձայնեցված, համընդհանուր փիլիսոփայության վրա, որն աջակցում է բարձր որակավորում ունեցող աշխատուժի հավաքագրմանը և պահպանմանը
- Ծախսերի հավասարեցման և ռեսուրսների բաշխման վրա՝ արդյունավետ ուսուցում, հասանելիություն և հնարավորություն ապահովելու բոլոր աշակերտների համար և մտածված գործողություն(ներ)՝ ձեռքբերումների բացը փակելու համար:
- Դպրոցների և շրջանների մարտահրավերները լուծող գործողությունների բացահայտման և իրականացման վրա:
- Խորհրդի և Վերակացուի նպատակների հասնելու վրա՝ ուղղված աշակերտների նվաճումների և բարեկեցությանը, ինչը Լոս Անջելեսի միացյալ շրջանը կդարձնի երկրի առաջատար քաղաքային շրջան:

Վերանայել և գնահատել առկա COVID-19 արձանագրությունները

Թարմացնել COVID-19 արձանագրությունները հանրային առողջապահության փորձագետների և համալսարանական գործընկերների համագործակցությամբ: Այս արձանագրությունները կաջակցեն շարունակական փոփոխություններին՝ կապված COVID-19-ի մեղմացման գործոնների հետ:

- Սահմանել տեղական ցուցիչների մի շարք՝ COVID-19 արձանագրությունների վերաբերյալ հստակ ուղեցույց տրամադրելու համար:
- Պարզեցնել դպրոցներին և ընտանիքներին տրամադրվող տեղեկատվությունը ուսման վրա ազդող COVID-19 պայմանների վերաբերյալ:

Աջակցություն բոլոր աշակերտներին, ովքեր իրավասու են ստանալու անվճար և ցածր գնով ճաշ

Տրամադրել շարունակական հատուկ աջակցություն բոլոր աշակերտներին, ովքեր իրավասու են դաշնային ֆինանսավորմամբ ծառայությունների համար:

- Նշանակել հատուկ ադմինիստրատորի՝ վերահսկելու ծրագրի և հարկերի համապատասխանությունը մասնավոր դպրոցի Title I ծրագրի համար:
- Հրապարակել Շրջանի ձեռնարկ՝ Title I-ի հավասար ծառայությունների իրականացման համար, որը ներառում է անձնակազմի աջակցության ցուցակը:

Կրկին ներգրավել աշակերտներին և իրենց ընտանիքներին

Ռազմավարություն մշակել և համագործակցել բոլոր նրանց հետ, ովքեր ունեն շահագրգռվածություն՝ բացահայտելու լավագույն ուսումնական միջավայրը աշակերտների համար՝ ուսումնական ծրագրի հասանելիության համար: Մենք նաև կբացահայտենք, թե «Հրեշտակների քաղաք» անկախ ուսումնական ծրագրում որ աշակերտները, ներառյալ հատուկ կրթության աշակերտները, անգլերեն սովորողները և սահմանված կարիքներ ունեցող այլ աշակերտներ, պետք է օգտվեն անհատական ուսուցմանը վերադառնալու առավելություններից:

- Սկսել իրազեկման քարոզարշավ՝ ընտանիքներին տեղեկացնելու համար, որ շրջանը պարտավորվում է ապահովել անվտանգ միջավայր առկա ուսուցման համար:
- Ընտանիքների հետ կապ հաստատել հեռախոսազանգերի և տեքստային հաղորդագրությունների, տնային այցելությունների, առողջության ստուգումների և լրացուցիչ փորձված մեթոդների միջոցով՝ խրախուսելու վերադառնալ առկա ուսուցմանը:
- Կազմակերպել «Վերաներգրավման միջոցառումներ» և ուղարկել բաց դռների և դպրոցական այլ միջոցառումների վերաբերյալ հրավերներ Հրեշտակների քաղաքի և վեց նոր վիրտուալ ակադեմիաների մասնակից աշակերտներին:
- Աշխատել Տարածաշրջանային կենտրոնների և Վերականգնման վարչության հետ՝ սպառողներին տեղյակ պահելու մեր տարածքում առկա հնարավորությունների մասին:
- Աշխատել համայնքային կազմակերպությունների հետ՝ ընտանիքներին առկա ուսուցմանը վերադառնալու հնարավորություն տալու համար:

Դպրոցներին աջակցելու կադրային պլան

Ակտիվորեն վերահսկել և վերլուծել կադրերի տվյալները՝ հայտնաբերելու թափուր աշխատատեղերը, անձնակազմի ավելորդ միավորները և հավաքագրման անարդյունավետ գործընթացները՝ ապահովելու համար, որ ամենաբարձր կարիքներով դպրոցները լիովին կլրացվեն մինչև 2022-2023 թվականների աշունը, և նվազագույնի հասցնելու խափանումները բոլոր դպրոցներում:

- Կրճատել և պարզեցնել առկա հավաքագրման և ընդունման գործընթացները՝ ապահովելու համար, որ անձնակազմ ավելի արագ տեղավորվի դպրոցներում՝ արդարացիորեն զբաղեցնելու թափուր աշխատատեղերը:
- Շարունակել առաջարկել կրթաթոշակներ հավաքագրման ժամանակ լիովին հավաստագրված ուսուցիչներին, ովքեր պարտավորվում են աշխատել շատ կարիքներ ունեցող դպրոցներում:
- Լուծել միգրացիայի և անձնակազմի պահպանման, խթանների և հնարավորությունների հարցերը:
- Ամրապնդել հաճախորդների սպասարկումը՝ ներդնելով Մարդկային կապիտալի գործընկերների մոդելը, որը կապահովի ուղիղ կապ դպրոցների և տեղական շրջանների համար:
- Մշակել և իրականացնել հավաքագրման ազգային ռազմավարություն դժվարին աշխատատեղերի համար:
- Տրամադրել շարունակական աջակցություն բոլոր աշխատակիցներին՝ աշխատելու և սովորելու համար անվտանգ և հավասար միջավայրեր ստեղծելու համար (օրինակ՝ Անուղղակի կողմնակալության թրենինգ):
- Կենտրոնանալ բազմազան աշխատուժի հավաքագրման վրա, որը բավարարում է աշակերտական բնակչության մշակութային և լեզվական կարիքները:
- Տրամադրել դասավանդման պրակտիկայի հնարավորություններ համալսարանի ուսանողների համար՝ բավարարելու Շրջանի կադրային կարիքները:
- Ընդլայնել տաղանդների թիվը մեր դպրոցներում՝ ավելացնելով նվիրյալ կամավորների թիվը՝ աշակերտներին և դպրոցներին մենթորական աջակցություն ցուցաբերելու համար:

Շահերի պաշտպանության ռազմավարություն

Մշակել համապարփակ, բազմամյա շահերի պաշտպանության ռազմավարություն, որը կներառի կարգավորման, քաղաքականության և եկամուտների հարցերը լուծելու տեսլական, որոնք առավելագույն ազդեցություն ունեն աշակերտների և համայնքների վրա, որոնց մենք ծառայում ենք: Ռազմավարությունը դիտարկելու է կարճաժամկետ և երկարաժամկետ նախաձեռնություններ, որոնք նպաստում են պայմաններին, որտեղ աշակերտները կարող են սովորել և առաջադիմել, օրինակ՝

- TK-12 և մեծահասակների կրթության աշակերտների համար ակադեմիական առաջարկների և ուսումնական պլանի վերանայում:
- Դպրոցական անձնակազմի պակասի շտկում՝ ուսումնասիրելով հավաքագրման, պահպանման և վերապատրաստման աշխատանքները:
- Տեղական, նահանգային և դաշնային ֆինանսավորման ռեսուրսների որոշում, որոնք կայուն են և կնպաստեն մեկ աշակերտի համար ծախսի բարձրացմանը, տեղափոխելով այն երկրի լավագույն տասնյակը:
- Օրենքների և կանոնակարգերի փոփոխություն, որոնք բացասաբար են անդրադառնում առավել անապահով աշակերտների վրա:

Որակյալ ամառային դպրոց և ընդլայնված ուսուցման հնարավորություններ բոլոր Title I դպրոցներում

Ընտանիքներին կրկին ներգրավելու և աշակերտների ուսմանը և սոցիալական հուզական բարեկեցությանը աջակցելու համար ամառային ծրագրերը կառաջարկվեն Title I-ի բոլոր դպրոցներում՝ շեշտը դնելով հատուկ բարձր կարիքներով աշակերտների վրա:

- Շարունակել առաջարկել բարձրորակ ամառային ծրագրեր Beyond the Bell ծրագրի և Title I-ի բոլոր դպրոցներում գործընկերների միջոցով՝ աշխատակիցների, բարեգործական և համայնքային կազմակերպությունների աջակցությամբ:
- Որոշել ռեսուրսները և անձնակազմը՝ ստանդարտների վրա հիմնված ուսումնական ծրագրին առաջարկելու համար, որը ներառում է մաթեմատիկայի, անգլերեն խոսքի և անգլերեն լեզվի զարգացում և կրեդիտների վերականգնում՝ գրավիչ թեմաներով և նախագծերով, դպրոցների համայնքների միջոցով:
- Մշակել հետաքրքիր դասընթացներ, օրինակ՝ ռոբոտաշինության, STEM-ի, կատարողական արվեստի, սպորտի և սննդի, օտար լեզուների և այլ ոլորտներում:
- Գործարկել նպատակային առաջարկներ աշակերտներին, որոնք անհամաչափորեն ազդվել են COVID-19-ի և «ամառային հալոցքի» հետևանքով, ներառյալ վերջերս ժամանած աշակերտներին և միգրանտ երեխաներին, որոշակի աշխարհագրական շրջաններից ցածր եկամուտ ունեցող երեխաներին և բացառիկ կարիքներով երեխաներին:

Կապիտալ բարելավումների մասին տեղեկատվության թափանցիկ վահանակ

Լոս Անջելեսի միացյալ շրջանը ներդրումներ է կատարում դպրոցների բարելավման մեջ: Օգտագործելով բաց տվյալների հարթակը, Շրջանը՝

- Կստեղծի կառավարման վահանակ, որը տրամադրելու է կապիտալ բարելավման տվյալները հանրությանը:
- Տեղեկատվությունը պետք է ներառի զբաղվածությունը, լրացուցիչ դասասենյակները, շրջակա միջավայրի պահպանությունը և ներդրված ընդհանուր գումարը:

ԳՈՐԾԵԼ

100 օրվա ընթացքում Շրջանը կունենա գրավոր և լիովին մշակված ծրագրեր, որոնք կլինեն լայնածավալ, համարձակ և գործունակ՝ լուծելու հետևյալը.

Ռազմավարական պլանի մշակում

Շրջանը կմշակի Լոս Անջելեսի միասնական 2022-2026 թվականների Ռազմավարական ծրագիրը՝ Կրթության խորհրդի հաստատման համար: Այս Ռազմավարական ծրագիրը կօգտագործի նոր և գոյություն ունեցող շահագրգիռ կողմերի ներգրավումը, կվերլուծի ամբողջ համակարգի կատարողականի տվյալները՝ ընդգծելու ուժեղ կողմերը և կարիքները և կհրավիրի բոլոր Շրջանի բաժինները և Կրթական խորհուրդը՝ դպրոցական համայնքների համար հստակ առաջնահերթություններ սահմանելու համար: Այս Ռազմավարական ծրագիրը՝

- Կհայտարարի Լոս Անջելեսի միացյալ շրջանի կազմակերպչական արժեքները և ինչպես է Շրջանը համապատասխանեցնելու իր գործողությունները այս արժեքներին:
- Կսահմանի եզակի նպատակ, որը կառաջնորդի մեր հավաքական ռազմավարությունը:
- Կսահմանի Լոս Անջելեսի միացյալ շրջանի «Գործողության տեսությունը», որը կտեղեկացնի մեր գործունեության մասին և այն մասին, թե ինչպես ենք մենք ռազմավարականորեն բաշխում մեր ռեսուրսները:
- Նախանշելու է մի շարք նշանակալից նպատակներ, որոնք համահունչ են Խորհրդի ընթացիկ նպատակներին և Գործողությունների այս տեսությանը:

Իրականացնել ընթացիկ, ռազմավարական գործառնական հանդիպումներ

Անցկացնել նպատակային, յուրաքանչյուր դպրոցին վերաբերող տվյալների վերլուծության նվիրված հանդիպումներ՝ նպաստելու դպրոցի և համակարգի մակարդակի շարունակական բարելավմանը: Տնօրենները լիազորված են բարձրաձայնելու կարիքները (օրինակ՝ ակադեմիական, կադրային, տեխնիկական), ինչը կպահանջի օժանդակ անձնակազմից անհապաղ արձագանքել՝ արագ լուծելու աշակերտների առաջադիմության հարցերը:

- Իրականացնել աշակերտների արդյունքների և դպրոցի տվյալների (օրինակ՝ անձնակազմի հաճախումները և թափուր աշխատատեղերը) ռազմավարական, կանոնավոր վերանայում:
- Վերանայել տնօրենների, օժանդակ անձնակազմի և գործադիր անձնակազմի հետ դպրոցական և դասարանական մակարդակի տվյալների քննարկումները, համեմատելով դրանք շրջանի մակարդակի միջին ցուցանիշների հետ, եթե կիրառելի է:
- Առաջնահերթություն տալ դպրոցներին, որոնք ծառայում են առավել անապահով աշակերտներին և համայնքներին՝ արագացնելու բարելավման և աջակցության տեմպերը:

Աշակերտների համընդհանուր առաջադիմություն

Ընդլայնել տվյալների վահանակի հասանելիությունը անձնակազմի համար՝ Խորհրդի նպատակներին հասնելու համախմբվածություն և կարողություններ ստեղծելու համար:

- Ընդունել ընդհանուր լեզու և ցուցանիշներ աշակերտների համընդհանուր առաջադիմության համար, ներառյալ սոցիալական զգացմունքային ուսուցման հիմնական կարողությունների սահմանումը, ապահովելու համար, որ բոլոր աշակերտները և ընտանիքները ստանում են բարձրորակ հետադարձ կապ աշակերտների առաջադիմության վերաբերյալ:
- Խորհրդակցել ազգային փորձագետի հետ՝ առաջնորդելու գործադիր ղեկավարությանը տվյալների օգտագործման համակարգային մոտեցում ցուցաբերելու համար՝ խթանելու համակարգերի փոփոխությունները, զարգացնելու խոստումվալից պրակտիկաները և զարգացնելու ղեկավարության կարողությունները յուրաքանչյուր մակարդակում:
- Տրամադրել հասանելիություն տարանջատված տվյալներին՝ ըստ դպրոցի և աշակերտի բնութագրերի:
- Տրամադրել ամբողջական պատկերացում այն մասին, թե ինչպես են աշակերտները և դպրոցները հանդես գալիս տարբեր ոլորտներում (օրինակ՝ ակադեմիական առաջադիմություն, հաճախում, սոցիալական զգացմունքային ուսուցման կարողություններ, ֆինանսներ, անձնակազմի համալրում):
- Շարունակել վարժեցնել միջնակարգ դպրոցի ղեկավարներին՝ վերահսկելու առանձին աշակերտների և աշակերտական խմբերի դասացուցակների ինտենսիվությունը՝ լուրջ ակադեմիական աշխատանքին հավասար հասանելիություն ապահովելու համար:
- Առաջարկություններ անել արդար գնահատման վերաբերյալ:

Շրջանի գրասենյակների և դրանց գործառույթների համակարգումը

Կարգավորել կազմակերպության կառուցվածքը՝ նպաստելու արդյունավետությանը, դերերի և փոխհատուցման համապատասխանությանը՝ ֆունկցիոնալ պարտականություններին համապատասխանեցնելու համար:

- Վերանայել ֆունկցիոնալ դերերն ու պարտականությունները ըստ բաժինների:
- Համակարգել գործառույթները աշակերտներին, դպրոցներին և ընտանիքներին լավագույնս ծառայելու համար:

Վաղ կրթության հնարավորությունների ընդլայնում

Համընդհանուր նախադպրոցական և անցումային նախապատրաստական դասարանների առաջարկի ընդլայնում ամբողջ Շրջանում, հատկապես այն տարածքներում, որոնք առավել կարիք ունեն ակադեմիական աջակցության: Վաղ կրթության ծրագրի որոշ տարրեր կարող են պահանջել գործողություններ առաջիկա 100 օրվա ընթացքում:

- Ուսումնասիրել Early Head Start-ի դրամաշնորհի հնարավորությունները և ընդլայնել 0-3 տարեկանների նստատեղերը:
- Սահմանել SENI հատուկ դպրոցները, որոնք ունեն բարձր և ամենաբարձր կարիքները՝ Ընդլայնված և Համընդհանուր նախապատրաստական դասարաններում տեղերի քանակն ավելացնելու համար՝ երկարաձգելով իրավասության ժամկետները:
- Ուսումնասիրել վաղ կրթության մանկավարժների կարիերայի զարգացումը և երեխաների խնամքի ներկայիս մատակարարների ընդգրկումը:
- Ներառել բյուջեի համար հետևանքները, հաստատությունների բարելավումը և անձնակազմի կարիքները և շահերի պաշտպանությունը:

ԳՈՐԾԵԼ

2022-23 բյուջեի ճշգրտումներ

2022-23 թվականների բյուջեի համապատասխանեցում առաջնահերթություններին և հիմական արդյունքներին, ներառյալ նահանգային և դաշնային օգնության ֆոնդերն օգտագործելու վերանայված ռազմավարությունը (ներառյալ ESSER III-ը), ներառելով

- Նվազած կախվածությունը ծախսերից, որոնք կպահանջեն վարձել լրիվ դրույքով (FTE) աշխատակիցներին այն պաշտոնների համար, որոնք շրջանը չի կարող լրացնել:
- Ռազմավարական երկամյա հեռանկարը, որն արձագանքում է մեր դպրոցների անմիջական կարիքներին և թույլ է տալիս պատասխանատու անցում կատարել մի վիճակ, որտեղ միջոցներն այլևս հասանելի չեն:
- Բարձր որակավորում ունեցող անձնակազմ ներգրավելու համար խթանների կիրառման փոփոխված պլանը:
- Աշակերտներին ծառայությունների մատուցման այլընտրանքային ռազմավարությունների բացահայտում, ներառյալ հնարավոր պայմանագրերը ժամանակավոր աշխատանքի ընդունող գործակալությունների հետ կամ հմուտ կադրերի հավաքագրումը՝ լրացուցիչ եկամուտ առաջարկելու հնարավորությամբ:

Դասարանների չափերի կրճատում

Գնահատել SENI-ի բարձր և ամենաբարձր կարիք ունեցող դպրոցներում դասարանների քանակի կրճատման իրագործելիությունը, ներառյալ անձնակազմի, բյուջեի և ակադեմիական նվաճումների վրա հնարավոր ազդեցությունը:

- Ամփոփել հետազոտությունը և դասարանի չափի կրճատման ազդեցությունը ակադեմիական նվաճումների վրա:
- Օգտագործել բազմաթիվ չափման տվյալների կետեր՝ որոշելու համար, թե որ դպրոցները և/կամ դասարանները կշահեն դասարանների չափը նվազեցնելու հնարավոր աստիճանաբար միջամտությունից:
- Հասկանալ, թե ինչ ազդեցություն ունի դասարանի չափի նպատակային կրճատումը Շրջանի բյուջեի և անձնակազմի կարիքների վրա:

Ծնողական ակադեմիա

Բարեգործական և համայնքային կազմակերպությունների հետ համագործակցելով՝ ստեղծել Ծնողական ակադեմիա, որը կենտրոնացած է կոհորտային դասընթացի վրա, որը նախատեսված է ընտանիքների ակտիվների հզորացման համար, քանի որ նրանք աջակցում են իրենց երեխաներին վաղ տարրական տարիներից մինչև քոլեջ և կարիերայի զարգացում: Ծնողների ակադեմիայի միջոցով Լոս Անջելեսի միացյալ շրջանն ընտանիքներին կտրամադրի զարգացման հմտություններ, տեղեկատվություն և ցանցային հնարավորություններ: Ծնողական ակադեմիան կներառի.

- Ընտանիքների անձնական զարգացման վրա կենտրոնացումը հիմված կլինի սոցիալական զգացմունքային բարեկեցության և աշակերտների ուսուցման ըմբռնման վրա և կնպաստի քաղաքացիական ներգրավվածությանը և աշխատուժի զարգացմանը:
- Ուղիներ, որոնք ստեղծում են ընտանեկան ցանցեր՝ հիմված տարբեր թեմաների վրա, որոնք կապում են ծնողների հետաքրքրությունները և փորձը:
- Ուսումնական ծրագիր, որը հիմվելու է մասնակիցների նախկին գիտելիքների և կյանքի փորձի վրա՝ խրախուսելով ակտիվ փոխազդեցությունը և բովանդակության համատեղ ստեղծումը և բազմաթիվ հնարավորություններ ընձեռելով ցուցադրելու ուսուցման կիրառումը:
- Ծնողական ակադեմիայի շրջանավարտներին հնարավորություն կտրվի համարձակորեն քայլել դեպի ապագա՝ բարդ մարտահրավերների միջով անցնելու հմտություններով նախադպրոցական տարիքից մինչև 12-րդ դասարան և դրանից հետո:

Մշակութային հարստացման անձնագիր

Մշակել մշակութային հարստացման անձնագրի ծրագիր՝ Լոս Անջելեսի միացյալ շրջանի յուրաքանչյուր աշակերտի և ընտանիքի կերպարվեստի, մշակութային առաջարկների, կրթական բացօթյա գործունեության և հարստացման հասանելիություն ապահովելու համար: Առաջարկել եզակի ծրագրեր յուրաքանչյուր դասարանի համար՝ օգտագործելով քաղաքի, շրջանի և տարածաշրջանի կազմակերպությունների կողմից առաջարկվող ռեսուրսները:

- Հրավիրել քաղաքացիական և արդյունաբերության առաջնորդներին՝ աջակցելու հարստացման փորձառությանը ըստ դասարանների մակարդակի:
- Օգտագործել տեխնոլոգիա՝ վիրտուալ ճամփորդությունների և փորձառությունների հասանելիությունն ընդլայնելու համար:
- Տրամադրել հնգամյա ծրագիր՝ երաժշտության ուսուցումն ընդլայնելու լրացուցիչ կարիքներ ունեցող տարրական դպրոցի աշակերտների համար:
- Բացօթյա ուսուցման հնարավորություններն ընդլայնելու ծրագիր առաջարկել:

Ուսուցման տարբերակների ընդլայնում

Մենք շարունակաբար ուսումնասիրում ենք ծրագրերի և ուսուցման տարբերակների ընդլայնումը Լոս Անջելեսի միացյալ շրջանում:

- Նոր ձևավորված Ռազմավարական ընդունելության և Ծրագրերի պլանավորման գրասենյակը ներկայումս յուրաքանչյուր տեղական շրջանին տրամադրում է Ռազմավարական ընդունելության հաշվետվություն, որը տրամադրում է բարձր մակարդակի և բաշխված տվյալներ ընդհանուր գրանցման միտումների, ինչպես նաև տարբեր ընտրովի ծրագրերի առաջարկի և պահանջարկի վերաբերյալ, ինչպիսիք են խորացված ուսուցման ծրագրերը, երկլեզու կրթական ծրագրերը, Կապակցված ուսուցումը, Միջազգային բակալավրիատը և Ընդլայնված ուսուցման դպրոցներ:
- Այս աշխատանքը ներառում է որոշակի ծրագրերի նկատմամբ ընտանիքների հետաքրքրության վերլուծություն, որոշակի տարածաշրջաններում ծրագրերի հասանելիության բացերը, աշակերտների որոշակի ենթախմբերի հասանելիության անհավասարությունը և մատուցման մոդելների, կարիերայի ուղիների (օրինակ՝ Մասնագիտական կրթություն, Կապակցված ուսուցում) և դիմելու գործընթացների անհրաժեշտ ճշգրտումները:
- Այս վերլուծությունը կիրականացվի բոլոր խորացված ուսուցումների ծրագրերի, երկլեզու կրթության և շնորհալի երեխաների համար Ընդլայնված ուսուցման դպրոցների համար:
- Ուսուցման առկա մեթոդների շարունակական կատարելագործում, ներառյալ վեց վիրտուալ ակադեմիաների արդյունավետ տեղակայումը:

ԳՈՐԾԵԼ

Բոլոր ընտանիքների միացումը

Մշակել ծրագիր, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ ունենա սարք, յուրաքանչյուր սարք՝ միացման հնարավորություն, և յուրաքանչյուր ընտանիք՝ համապատասխան տեխնիկական աջակցություն: Ծրագրի բաղադրիչները կներառեն.

- Երեքից հինգ տարի տևողությամբ սարքի թարմացման ծրագիր աշակերտների և աշխատակիցների համար:
- Բարելավված կապ համալսարանի ներսում և դրա սահմաններից դուրս՝ տեղեկատվական անհավասարությունը նվազեցնելու համար:
- Աշակերտների, ծնողների և անձնակազմի թվային գրագիտության բարձրացում:
- Բացահայտել քաղաքի, շրջանի, բարեգործական և այլ դպրոցական շրջանների հետ համագործակցության հնարավորությունները:
- Բացահայտել կայուն ֆինանսավորման աղբյուրները՝ ծրագրին աջակցելու և իրականացնելու համար:

Վաստակած ինքնավարության

«Վաստակած ինքնավարության» մոդելի իրականացում, որը համապատասխան հավասարակշռություն է հաստատում Խորհրդի իրավասության վրա հիմված օրակարգի և վերջին ապակենտրոնացման ջանքերի միջև, ինչը՝

- Դպրոցներին հնարավորություն կտա գերազանցել կատարողականը երեք հիմնական ոլորտներում. ակադեմիական առաջադիմություն, առողջ ֆինանսական կառավարում և դպրոցական համայնքների և ընտանիքների ներգրավվածություն:
- Կզարգացնի դպրոցների համար բազմաշերտ աջակցության կառուցվածք՝ հիմված աշակերտի և դպրոցի մակարդակի ընդհանուր ցուցանիշների և կրթության խորհրդի նպատակների ուղղությամբ առաջընթացի շարունակական մոնիտորինգի վրա:
- Հստակորեն կբաշխի դպրոցներին հասանելի ֆինանսական և մարդկային ռեսուրսները՝ հիմնվելով բազմաշերտ աջակցության կառուցվածքի վրա:
- Շարունակաբար կվերահսկի և կզարգացնի ռեսուրսների համապատասխանեցումը կարիքների հետ՝ հիմված աշակերտների և դպրոցների առաջադիմության կանոնավոր գնահատումների վրա:

Սևամորթ աշակերտների առաջադիմությունը

Սևամորթ աշակերտների բարձր առաջադիմությունը սահմանվում է բարձր ակադեմիական կատարողականությամբ, ուժեղ սոցիալ էմոցիոնալ իրազեկմամբ և կառավարմամբ և դրական մշակութային ինքնությամբ: Մենք կշարունակենք կիրառել ռազմավարություններ և մեթոդներ, որոնք օգտագործվում են ակադեմիական աճը զարգացնելու և սևամորթ աշակերտների հատուկ կարիքներին անմիջականորեն արձագանքելու համար՝ հիմականում պատմական և ընթացիկ սոցիալական և տնտեսական պայմանների պատճառով:

- Որոշել աշակերտների մաթեմատիկայի և ELA/անգլերենի իմացության ներկայիս մակարդակը՝ օգտագործելով գնահատման գործիք, որը խիստ փոխկապակցված է (մաթեմատիկորեն) ամփոփիչ Smarter Balanced-ի (այսինքն՝ SBAC IABs/FIABs/ICA) հետ Սևամորթ աշակերտների առաջադիմության պլանի (BSAP) բոլոր տեղերի համար:
- Ստեղծել կառուցվածքներ՝ բացահայտելու և լուծելու անգլերեն խոսքի/անգլերեն լեզվի և մաթեմատիկայի առարկաներից դպրոցական օրվա ընթացքում ծագող խնդիրների յուրաքանչյուր աշակերտի համար BSAP-ի բոլոր տեղերում:
- Հաճախակի հետադարձ կապ տրամադրել ուսուցիչներին, որպեսզի համոզվել, որ ուսուցումը սերտորեն համապատասխանում է չափանիշներին:
- Հստակեցրել և ճշգրտել 2022-23 թվականների ծրագիրը՝ հիմնվելով 2021-22-ի տարեվերջի աշակերտների արդյունքների տվյալների վրա:
- Վերլուծել ինտենսիվ դասընթացների առաջարկները, ակադեմիական և արտադպրոցական հնարավորությունները:

Հաշմանդամություն ունեցող աշակերտների ընդգրկման հնարավորությունների ավելացում

Սահմանել հատուկ դպրոցներ՝ ներառական պրակտիկային մասնակցելու համար, ընդգրկելով հաշմանդամություն ունեցող բոլոր աշակերտներին, և բարձրացնել հանրակրթական միջավայրում կրթություն ստացող հաշմանդամություն ունեցող աշակերտների թիվը:

- Աջակցել դպրոցներին ներառական պլան մշակելու հարցում:
- Կապ հաստատել դպրոցների և համայնքային գործընկերների միջև, որոնք աջակցում են ներառական գործելակերպին:
- Հաջող ներառական ծրագրեր իրականացրած դպրոցների դիտարկման հնարավորություններ ստեղծել:
- Տրամադրել մասնագիտական զարգացում դպրոցների ադմինիստրատորներին ներառման դրական ազդեցությունների և նախաձեռնության ռազմավարությունների վերաբերյալ:
- Բարձր գնահատական տալ ներառական պրակտիկայով զբաղվող դպրոցներին և նշել այն պաստառով:
- Ապահովել հարաբերություններին բարձրագույն կրթության ինստիտուտների և Տեղական թաղամասերի միջև՝ ուսուցանելու և աջակցելու ներառականության իրականացմանը:
- Վերապատրաստել տեղական շրջանի հանրակրթական և հատուկ կրթության անձնակազմին՝ ներառական պրակտիկային աջակցելու համար:
- Մշակել ելակետային տվյալներ և վահանակ՝ գնահատելու համար աշխատողների ծախսած ժամանակը Անհատական ուսումնական պլանը գնահատելու և ավարտելու համար:

Անգլերեն սովորողների առաջադիմության բարելավում

Սահմանել օրինակելի դպրոցներ, որոնք իրականացնում են արդյունավետ հաստատված ELD և ինտեգրված ELD-ի ուսուցում, որոնք արագացնում են վերադասակարգումը և առաջընթացը անգլերեն սովորողների համար:

- Շարունակել աշխատանքը Անհատական վերադասակարգման պլանների լիարժեք իրականացման ուղղությամբ:
- Ապահովել տվյալների նպատակային վերլուծություն և աշակերտների կարիքների սահմանում:
- Ընդլայնել ադմինիստրատորների, Title 3-ի հրահանգիչների և անգլերեն սովորողներին դասավանդողների գիտելիքների և ազդեցության մակարդակը, այն առնչությամբ, թե ինչպես աջակցել անգլերեն սովորողների ուսուցմանը, ներառյալ անգլերեն սովորողների միկրոհավատարմագրերի ընդլայնման միջոցով:
- Շարունակել և ընդլայնել համագործակցությունը հետազոտական հաստատությունների և անգլերեն սովորողներին դասավանդող դպրոցական թիմերի հետ:

- Ներդնել ստանդարտ պրակտիկաներ բոլոր տեսակի անգլերեն սովորողների համար, ներառյալ նորեկ սկսնակները:
- Կենտրոնանալ մասնագիտական զարգացման և ուսուցման աջակցության վրա անգլերեն սովորողների համար, ովքեր նաև սովորելու անկարողություն ունեն:
- 3-8-րդ դասարանների անգլերեն սովորողների կենտրոնացված մոնիտորինգ՝ երկարաժամկետ անգլերեն սովորողների քանակը նվազեցնելու համար:

Դպրոցական սննդի ծառայությունների մակարդակի բարձրացում

Սահմանել աշակերտների սննդի պայմանների նոր փաթեթ, ներառյալ սննդային արժեքները, տեղական ծագման սնունդը և առողջ կանաչեղենը:

- Վերլուծել, թե ինչ են ուտում աշակերտները, և որտեղ են նրանք ուտում:
- Օգտագործել աշակերտների կարծիքը և փորձը՝ բարելավելու առաջարկները, ինչպիսիք են խոհանոցում համտեսումը և սոցիալական մեդիայի արշավները:
- Սահմանել սննդամթերքի թափոնները նվազեցնելու հնարավորությունները:

Մեծահասակների կրթության աշակերտների հնարավորությունների ավելացում

Բարձրացնել բարձրորակ նախադպրոցական և հետմիջնակարգ կրթության և վերապատրաստման հնարավորությունները Լոս Անջելեսի միացյալ շրջանի տեղական համայնքներում Մեծահասակների և մասնագիտական կրթության բաժնի միջոցով:

- Ուսումնասիրել բաց վիրտուալ ակադեմիայի իրագործելիությունը Մեծահասակների կրթության աշակերտների համար 2022 թվականի աշնան համար:
- Տրամադրել ծրագրեր՝ ընդլայնելու կարիերայի ուղիները կադրերի պակաս ունեցող ոլորտների համար, ինչպիսիք են լիցենզավորված մասնագիտական բուժքույրերը, շենքերի և տարածքների բանվորները, ուսուցիչների օգնականները և սննդի ծառայության աշխատողները:
- Զեկուցել արդյունաբերության գործընկերների հետ համագործակցության ընդլայնման հնարավորությունների մասին, ինչպիսիք են աշկերտության նոր ուղիների ստեղծումը բարձր պահանջարկ ունեցող արդյունաբերության ոլորտներում:
- Համագործակցել բիզնեսի և աշխատուժի զարգացման գործակալությունների հետ և որոշել առաջատար և զարգացող ոլորտները՝ շրջանի աշխատուժի կրթական համակարգում ավելի ճիշտ հետևողականություն ստեղծելու համար:
- Խթանել սկզբնական մակարդակի աշխատատեղերի հավաքագրումը ոչ առևտրային աշխատուժի գործակալությունների հետ համատեղ վերապատրաստման հնարավորությունների միջոցով:

Համագործակցություն Լոս Անջելեսի շրջանի հետ՝ լուծելու մեր դպրոցական համայնքի հոգեկան առողջության և բարեկեցության հարցերը

Լոս Անջելեսի միացյալ շրջանը կմշակի ծրագիր, որը կմիավորի շրջանի, քաղաքի և վարչաշրջանի մակարդակների հոգեկան առողջությանը վերաբերող ֆինանսավորումը և անձնակազմը՝ ապահովելու հետևողական, արդարացի և լայն ծառայությունների մեծ փաթեթ դպրոցների և համայնքների համար խիստ կարիքավոր տարածքներում:

- Ներգրավել քաղաքի և վարչաշրջանի գործընկերներին դպրոցին առնչվող բացահայտված խնդիրների լուծման գործում, և որոշել, թե ինչ արտաքին ռեսուրսներ կան այդ խնդիրները լուծելու համար:
- Ուսումնասիրել հնարավորությունները՝ պարզեցնելու ծառայությունները և ուղղորդումները հոգեկան առողջությանը աջակցության համար, ինչպիսիք են թերապևտները, ծրագրեր վիշտ ունեցողների համար և թմրամոլության բուժումը:
- Բարձրացնել հիմական մատակարարների հասանելիությունը՝ ընտանիքներին սնունդով, բնակարաններով ապահովելու, իրավական կամ տրանսպորտային աջակցություն տրամադրելու համար:
- Մշակել գործընթացներ և համաձայնագրեր քաղաքների և շրջանների հոգեկան առողջության մասնագետների հետ՝ դպրոցներին աջակցելու համար մինչև ուսումնական տարվա վերջ:
- Խնդրել աջակցություն մասնագիտական զարգացման և վերապատրաստման համար Շրջանի հոգեկան առողջության մասնագետների համար:

Ուսումնասիրեք աշակերտների տրանսպորտային ծառայությունները բարելավելու տարբերակները

Ընդլայնել և օպտիմիզացնել փոխադրումների տարբերակները՝ ուղևորների փորձը բարելավելու համար:

- Վերլուծել և ուսումնասիրել ավելի կարճ ավտոբուսային երթուղիների իրագործելիությունը՝ նպատակ ունենալով ապահովել ուսուցման հնարավորությունների հավասար և ժամանակին հասանելիություն:
- Վերլուծել տեխնոլոգիայի ներդրումը, որը ծնողներին կտեղեկացնի երթուղու ուշացումների և աշակերտի մտնելու կամ դուրս գալու մասին:
- Տեղադրել ոգեշնչող սոցիալական զգացմունքային և ուսուցողական հաղորդագրություններ դպրոցական ավտոբուսներում:

LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICT • STUDENTS AT THE CENTER •

achieve.lausd.net/100dayplan

@LAUSDSup